**Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամի Ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), ՆԶՊ-ի եւ անվտանգ կենսագործունեության (18 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստա- վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի
հարցաշարը կազմում է հաստատությունը Այուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող
փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝
ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկկամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի պնօրինակները համեմատում է պատճենների հետ Աբնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 7-ից մինչեւ փետրվարի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**
Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 22-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Գևորգ Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամում, հասցեն՝ ք. Երեւան, Կորի 55:
Տեղեկությունների համար զանգահարել՝
(010) 54-00-10, (010) 54-15-62 հեռախոսահամարներով: